

մանչանը⁸: Այս տոհմից յայտնի են մի շարք ներկայացուցիչներ, հիմնականում՝ նշուած վանքի միաբաններ, գրիչներ, ձեռագրի պատուիրատուներ եւ այլն: Նուիրատու խաչքոն երիտասարդ տարիներին եղել է գրիչ: Նրա ընդօրինակութիւններէից վաղագոյնը Յաղագս բնութեան մարդոյ Գրիգորի Նիսացոյ աշխատութիւնն է, որի յիշատակարանում կարդում ենք. «Արդ եղեւ զրաւ գրչութեան սորա ի թվին հայկազան տուժարի ԻԱ որելանի եւ ժԸ թիւ աւելի [1619] յամսեանն մարտի ժէ [17] երորդի, օրն չորեքշաբթի, ձեռամբ խաչքոյի մականուամբ Տօմաթիրսքի, յերկիրս Իլախաց... ի քաղաքն Լով առ դրան ննջման Ս. Աստուածածնին...»⁹: Խաչքո գրչի գործն է նաեւ Վարք սրբոցը, որը «Գրեցաւ պատմութիւնս ձեռամբ Աւետիքի որդոյ խաչքոյի, թվին ՌՂԹ [1630]»¹⁰:

Նոյն վանքում բազմաթիւ ձեռագրեր են ընդօրինակել խաչքոյի երկու եղբայրները՝ Նիկոլը եւ Գրիգորը: Նիկոլի ընդօրինակած ամենահին ձեռագրերը վերաբերում են 1613 թ.: Երեւանի մատենադարանում է պահւում նրա եւ գրչակից ընկեր-

ներ Թորոս դպիրի եւ Ղազարի ընդօրինակած մի ժողովածոյ: Յիշատակարանում կարդում ենք. «Ձսակաւ աշխատողս ի սմա մեղսամած եւ բազմաւնր հոգիս յիշէք, եղբարք, ի Տէր զ[ՆՆ]կոլ Լովցի, որ է որդի պարոն Աւետիքին, մականուն Տօմաթիրսքին...: Բայց գրեցաւ սա ի թվին Հայոց ՌԿԳ [1613]...»¹¹: Նրա տոհմաբանութեան ճշգրտման տեսակէտից կարեւորում է մեր մատենադարանի թիւ 8420 ձեռագիր ժողովածոյի յիշատակարանը. «Արդ անկեալ աղաչեմ զամենեանդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ յօրինակելով մէկ Հայր մերի, մի մի յիշեցէք զանպիտան գրիչս՝ զՆիկոլ Տօմաթիրսքին, եւ զծնօղս իմ, եւ զհայրն իմ զԱւետիքն եւ զմայրն իմ՝ զԱննայն, եւ զեղբօրն՝ զԽաչքո...»¹²: Նոյն Նիկոլ գրչի ընդօրինակութիւնն է նաեւ մատենադարանի թիւ 1719 ձեռագիր ժողովածոյն (թերեւս 1613 թ. ժողովածոյի կրկնօրինակը). «Ձսակաւ աշխատողս ի սմա մեղսամած եւ բազմաւնր յոգիս յիշէք ի Տէր զՆիկոլ Լովցի, մականուն Տօմաթիրսքի, որդոյ պարոն Աւետիքին... աւարտեցաւ սա ի թվին Ի [20] որելեանի եւ Ա [1] որելեանի եւ տասն չորսին [1615]...»¹³: Նիկոլի գրչական գործունէութիւնը բաւական երկարատեւ է եղել: Լվովում (թերեւս նոյն վանքում) 1633 թ. ընդօրինակուած մի Աւետարանի յիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ այս յիշատակարանս ձեռամբ Նիկոլի՝ որդոյ պարոն Աւետիքիին, ազատագնեայ Տօմաթիրսքեց, թվին Հայոց ՌԶԲ [1633], փետրուարի ժԹ [19], օրն շաբաթի քաղաքն Լով, երես անկեալ աղաչեմ զձեզ, որդիք Սիովնի,

8 Հանգուցեալը պան Հոսքայի դուստր, պան Խաչքո Աւետիքեցի կողակից պանի Հայուդանն է՝ մահացած 1648 թուականին (Դիւան հայ վիճագրութեան, պր. VII, Ուկրաինա, Մոլդովա, կազմեց Գ. Մ. Գրիգորեանը, Եր., 1996, էջ 181, արձ. 464): Սկիսի արձանագրութեան մէջ Խաչքոյի կինը Վառվառն է: Քանի որ, մեր համոզմամբ, հանգուցեալ Հայուդանի ամուսինը սկիսի անուանու Խաչքոն է (միջնադարում յաճախ, որպէս ազգանուն, ընտրում էր հայրանունը. տուեալ դէպքում Աւետիքեցի), ուստի, կարծում ենք, որ այստեղ գործ ունենք կրկնանունան հետ, յատկապէս, եթէ կրկնանունան բաղադրիչներից մէկը օտարաբան է և օտարապատկան Հայուդանն է:

9 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԷ դար, հտ. Ա, կազմեցին Վ. Յակոբեանը, Ա. Յովհաննիսեանը, Եր., 1974, էջ 712:

10 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԷ դար, հտ. Բ, կազմեցին Վ. Յակոբեանը, Ա. Յովհաննիսեանը, Եր., 1978, էջ 364:

11 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԷ դար, հտ. Ա, էջ 477

12 Նոյն տեղում, էջ 495-496

13 Նոյն տեղում, էջ 546

որ զիս եւ զիմ կողակիցն՝ զԱննան յիշեալիք...»¹⁴:

Նիկոլը յիշուած է նաեւ 1640 թ. «Ի քաղաքն Բեորդբով» Մկրտիչ գրչի կողմից ընդօրինակուած Աւետարանի յիշատակարանում. «Երեցէք... ի մաքուր յաղօթս ձեր զՆիկոլ Լովցի, պարոն Աւետիք Տօմաթիրսքեց որդին»¹⁵:

Երեւանի մատենադարանի թիւ 3771 Ճառընտիրի յիշատակարանում կարդում ենք. «եւ զիս՝ զանարժան զՆիկոլ Տօմաթիրսքեց, որ զայս թուականին նորոգեցիք, ի թվին Հայոց ՌԿԳ [1614] եւ փետրուարի է [7], օրն երկուշաբթի աւարտեցաւ, ի մայրաքաղաքն Իլով, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին հայկազանց եկեղեցոյ... կարդալով կամ յօրինակելով մի մոռանայք յիշել մէկ Հայր մերիւ զանպիտան զգրիչս զԳրիգոր Տօմաթիրսքին եւ զծնօղս իմ եւ զայլ ամենայն արեան մերձակորսն...»¹⁷: Նոյն թուականի յունիսի 16-ին նա աւարտում է Ջաքարիա քահանայի պատուիրած ժողովածոն¹⁸:

Ս. Աստուածածին եկեղեցում Սարգիս դպիրը ընդօրինակութեան է պատուիրում Մեկնութիւն արարածոց մատեանը, որը. «Գրեցաւ... ի թուին ՌԿԹ [1616], ի քաղաքն Իլով... ձեռամբ մեղապարտ Գրիգորին, մականուամբ Տօմաթիրսքին»¹⁹:

14 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԷ դար, հտ. Բ, էջ 501: Յիշատակարանի հրատարակիչները թուականի կողքին դրուած հարցական նշանի կապակցութեամբ տողատակ ծանօթագրում են. «Հարցականը ցուցակում է (Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանի ձեռագրաց ցուցակ - Գ. Ս.): 1633 թ. փետրուարի 19-ը շաբաթ է ի յին, այլ՝ երեքշաբթի: Այդ օրը ձեռագրի ընդօրինակող համարում են Աւետիքին (Նիկոլ անձնանուն վրայ բութի նշանը մերն է - Գ. Ս.): Նախորդ յիշատակարանների վկայութիւնների հիման վրայ գտնում ենք, որ գրիչը Նիկոլն է, յատկապէս կնոջ՝ Աննայի յիշատակմամբ: Ազատագնեայ բառով բնորոշում է տոհմի ազնուականական ծագումը:

15 Նոյն տեղում, էջ 787

16 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԷ դար, հտ. Գ, կազմեց Վ. Յակոբեանը, Եր., 1984, էջ 703:

մեզ օգնում է օրուայ պատկերը, հին տոմարով 1656 թ. սեպտեմբերի 16-ը կը լինի երեքշաբթի (ինչպէս յիշատակարանում - Գ. Ս.), իսկ 1636 թ. նոյն ամսաթիւը՝ ուրբաթ»:

Տոմաթիրսքեց տոհմի երեք եղբայրներից առաւել բեղմնաւորը եղել է Գրիգորը: Դատելով պահպանուած ձեռագրերից՝ նա ընդօրինակման գործը սկսել է եղբօր՝ Նիկոլի հետ միաժամանակ: Առաջինը մեր մատենադարանի թիւ 4405 ժողովածոյն է. «...գրեցաւ Սբ. Գիրքս այս, որ կոչի Քալոգիւրք, ի թվին Հայոց ՌԿԳ [1614] եւ փետրուարի է [7], օրն երկուշաբթի աւարտեցաւ, ի մայրաքաղաքն Իլով, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին հայկազանց եկեղեցոյ... կարդալով կամ յօրինակելով մի մոռանայք յիշել մէկ Հայր մերիւ զանպիտան զգրիչս զԳրիգոր Տօմաթիրսքին եւ զծնօղս իմ եւ զայլ ամենայն արեան մերձակորսն...»¹⁷: Նոյն թուականի յունիսի 16-ին նա աւարտում է Ջաքարիա քահանայի պատուիրած ժողովածոն¹⁸:

Ս. Աստուածածին եկեղեցում Սարգիս դպիրը ընդօրինակութեան է պատուիրում Մեկնութիւն արարածոց մատեանը, որը. «Գրեցաւ... ի թուին ՌԿԹ [1616], ի քաղաքն Իլով... ձեռամբ մեղապարտ Գրիգորին, մականուամբ Տօմաթիրսքին»¹⁹:

Գրիգորի «Ի լաւ եւ յընտիր օրինակէ» ընդօրինակած ձեռագրերից վերջինը (պահպանուած) Մեկնութիւն Յորայ աշխատութիւնն է. «Գրեցաւ սա ձեռամբ մեղսամած եւ փոռն գրչի Գրիգորի, որդոյ պարոն Աւետիքին, մականուն Տօմաթիրսքին, ի խնդրոյ տէր Գրիգոր կրօնաւորին... ի թուականութեանս Հայոց ՌԿԸ [1619]... ի քաղաքս Լեհաց, որ կոչի Լով, ընդ հովանեաւ»:

17 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԷ դար, հտ. Ա, էջ 521

18 Նոյն տեղում, էջ 523

19 Նոյն տեղում, էջ 599

նեաւ Ննջման Ս. Աստուածածնին, Ս. Հաճ-
կատար Ս. Աստուածածնի, Ս. Յակոբին, եւ
Ս. Խաչին»²⁰: Այնուհետ Գրիգորը խնդ-
րում է, որ ձեռագրի ընթերցողները ողորմի
ասեն իր հանգուցեալ վարպետ-ուսուցչին՝
Գրիգոր Զէյթունցի քահանային, որը «զի
այր գիտնական եւ քաջ փիլիսոփայ էր,
յոյժ հմուտ Հին եւ Նոր Կտակարանաց»:

Գրիգորը վերջին անգամ յիշատա-
կուած է 1625 թ. ընդօրինակուած ձեռագ-
րում՝ որպէս յետին ստացող. «Աստուած
գթալ յիս ի մեղուցեալ ծառայս եւ ողոր-
մեա ինձ բազմամեղիս Գրիգորի Տօմա-
ծիրսքին»²¹:

Սկիզբի արձանագրութեան մէջ յի-
շուած միւս անձը, որի մասին յաջողուց
այլ վկայութիւններ գտնել (որոշ վերապա-
հուութեամբ), դա Խաչը Տօմածիրսքեցի
կնոջ՝ Վառվառի հայր պարոն Հոլուպ
Եասքոնցն է: Նախքան նրան անդրա-
դառնալը, կարճ էքսկուրս կատարենք լե-
հահայոց, մասնաւորապէս՝ լվովահայոց
միջնադարեան պատմութեան քառուղիներ-
րում:

Լվովի հայ բնակչութեան համայնքա-
յին գործունէութեան վարչա-իրաւական
կարգաւորման կարեւորագոյն ակտերից
մէկը Լեհաստանի Կազիմիր III թագաւորի
1356 թ. յունիսի 17-ին հրապարակած ար-
տօնագիրն էր, որով սահմանուեալ էր Լվով
քաղաքի իրաւական ստատուսը²²: Փաստօրէն
սա իրաւական հիմք հանդիսացաւ հայոց
համայնքային ինքնավարութեան ղեկա-
վար կառուցի ստեղծման համար, որի
գլուխ սկզբնական շրջանում կանգնած էր
լեհական վոյտը. «հետագայում, հակառակ
Կազիմիր III-ի ցուցումի, լեհական վոյտի

փոխարէն, աւելի քան մէկ հարիւրամեակ
(մինչեւ 1469 թ.) Լվովի հայոց ինքնավա-
րութեան գլուխ կանգնած էր հայոց վոյ-
տը»²³: Նշուած թուականին Կազիմիր Եա-
գելոնչիկի դեկրետով վերացուց հայկա-
կան վոյտութիւնը²⁴: Լվովահայերի ինք-
նավարութեան կառոյցների վերականգն-
ման համար պայքարի արդիւնքում XVI դ.
Սիգիզմունդ I եւ Սիգիզմունդ Աւգուստ
թագաւորների դեկրետներով հայերի դա-
տական գործերը պէտք է քննուէին հայոց
դատարանում, որ բաղկացած էր 12 եր-
դուեալ ատենակալներից՝ լեհ վոյտի նա-
խագահութեամբ²⁵: Լեհահայոց մէջ վոյտի
ինստիտուտի վերաբերեալ ուշագրաւ վկա-
յութիւն է պահպանուել: 1627 թ. Լվովի
թեմակալ առաջնորդ Նիկոլ Թորոսովիչի
ուղեկցութեամբ Եազովեց քաղաք է ժա-
մանում կաթողիկոս Մելիքսեդեկը: Նրան
այնտեղ ներկայանում են տեղի Կտրիճաւո-
րաց եղբայրութեան ներկայացուցիչները եւ
վեհափառից ստանում հաստատումն եւ օրհ-
նանքի գիր, որտեղ մատնանշուած է նաեւ,
որ այդ կազմակերպութեան կանոնադրու-
թիւնը իրենից առաջ «հաստատուած է ե-
ղել գաղութի երեսփոխանի եւ վոյթի կող-
մից»²⁶:

Մեր այս պատմական համառօտ անդ-
րադարձը պայմանաւորուած է լեհահայոց
մէջ վոյտի պաշտօնական գործառոյթների
պարզաբանման փորձով: Վ. Գրիգորեանը
վերը յիշուած յօդուածի վերջում տալիս է
օտար բառերի ու բառեզրերի բառարան,
որտեղ նշուած է վոյթ (գերմ.) - համայնքի
ընտրովի առաջնորդ²⁷: Սակայն առկայ են

23 Նոյն տեղում, էջ 81
24 Նոյն տեղում, էջ 82
25 Նոյն տեղում, էջ 83
26 Վ. Ռ. Գրիգորեան, Եազովեց քաղաքի հայկա-
կան գաղութի «Կտրիճուորաց եղբայրութեան»
կանոնադրութիւնը, «Լրաբեր» հաս. գիտ., 1973,
9, էջ 42-43
27 Նոյն տեղում, էջ 58

20 Նոյն տեղում, էջ 716

21 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԷ
դար, հտ. Գ, էջ 165

22 Մ. Լ. Յովհաննիսեան, Ուրուագծեր Լեհաստա-
նի եւ Արեւմտեան Ուկրաինայի հայկական գաղ-
թավայրերի պատմութեան, Եր., 1977, էջ 78

նաեւ վկայութիւններ, որոնք փաստում են
վոյտի առնչութիւնը դատական համակար-
գի հետ: Վերը նշեցինք, որ հայոց դատա-
րանը նախագահում էր վոյտը: Սա յիշուած
է նաեւ Մ. Բժշկեանը. «Վոյթն միշտ նա-
խագահ էր եւ ընդ դատաւորացն որոշէր
գղատն...»²⁸: Կամենեց-Պոդոլսկում պե-
ղումների ժամանակ գտնուել է մի տապա-
նաքարի բեկոր, լեհերէն արձանագրու-
թեամբ. «...[ԱՍՏ ՀԱՆԳՁԻՆ] ՈՍԿՈՐՆԵ-
ՐԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՎՈՅԹ... (մահ.)
1732»²⁹: Հրատարակիչը վոյթը թարգմանել
է դատաւոր:

Արդ, անդրադառնանք բուն խնդրին,
այն է՝ սկիզբի յիշատակագրում նշուած
պարոն Հոլուպ Եասքոնցի անձին: Մատե-
նագրական աղբիւրներում այս Հոլուպն
ուղղակիօրէն չի յիշատակուած, սակայն
առկայ են այդ անունի մի շարք վկայու-
թիւններ, որոնք, նկատառելով անձնա-
նունի սակաւադէպութիւնը եւ մեր պարո-
նի հետ համաժամանակութիւնը, հնարա-
ւոր ենք համարում նրանց նոյնացումը: Ե-
րեւանի մատենադարանում պահուող մի
ժողովածուի յիշատակարանում կարդում
ենք. «Գրեցաւ Գաւազանագիրքս ձեռամբ

մեղաւոր եւ անարժան Ներսէս դպրապետի,
ի քաղաքն Կամէնից, որդոյ Հօլուպ վոյթի,
թուին ՌՀԳ [1624]»³⁰: Մէկ այլ յիշատա-
կարանում (1625) նոյն Ներսէսը «որդույ
Հօլուպ վոյթին Կամէնցոյ» սարկաւազ է
յորջորջուած³¹: Ներսէս գրչին հանդիպում
ենք նաեւ 1638 թ. մի Բաւգրքի յիշատա-
կարանում. «Մէն տէր Ներսէս Հօլուպ
վոյթ օղլու...»³²: Հոլուպ անունի հանդի-
պում ենք նաեւ աւելի վաղ մի յիշատակա-
րանում: Ձեռագիրն ընդօրինակուել է.
«Հայոց թվ ՌնՁ [1597]... Թագաւորութէ
երրորդ Զիկմունդին, կթղկսութէ տր Դաւ-
թին, իշխանութէ քաղաքիս Եան Բոթոցքի-
յին. երեսփոխանութէ պր Միխնոյին եւ պն
Սարգսին, դատաւորութէ Հօլուպին»³³: Հո-
լուպ վոյտի կամենեցի լինելը եւ այնտեղ
գործելը, չենք կարծում, որ անհնար է
դարձնում խնդրոյ առարկայ ազնուական
ընտանիքների՝ Տօմածիրսքեցի եւ Եաս-
քոնց խնամիացումը:

Մեր վերջին դատողութիւնները, հա-
ւանաբար, կարող են փոքր-ինչ անհամո-
զիչ թուալ, սակայն կարծում ենք ոչ ան-
հաւանական ու անտրամաբանական:

28 Միգաս Բժշկեան, Ժամապարհորդութիւն ի Լե-
հաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի Հայկա-
զանց սերելոց ի անիմեաց Անի քաղաքիս,
շարադրեալ հանդերձ զանազան բանասիրա-
կան տեղեկութեամբ, Վեներիկ-Ս. Ղազար,
1830, էջ 117

29 Դիւան հայ վիմագրութեան, պրակ 7, էջ 247,
արձ. 585

30 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԷ
դար, հտ. Բ, էջ 131

31 Նոյն տեղում, էջ 167

32 Նոյն տեղում, էջ 717: Կարծում ենք, որ յիշա-
տակարանը շարադրուած է հայ-ղիջաղերէն
խառնալեզուով:

33 Միգաս Բժշկեան, Ժամապարհորդութիւն ի Լե-
հաստան..., էջ 153